ՀԱՍՄԻԿ ՇԱՓԱՂԱԹՅԱՆ
Երևանի պետական համալսարանի Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ ամբիոնի դոցենտ, քաղաքական գիտությունների թեկնածու

ԼԻԴԵՐ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Հոդվածում ներկայացված է լիդեր քաղաքական գործչի և ընդհանրապես լիդերության հոգեբանական առանձնահատկությունները արդի համաշխարհային զարգացումների լույսի ներքո: Թեև լիդերության տարբեր հայեցակարգային մոտեցումները արժեքավոր են ժամանակակից սոցիալական գիտակարգերի (քաղաքագիտություն, մենեջմենթ, սոցիոլոգիա և սոցիալական, քաղաքական, անձի հոգեբանություն) համատեքստում և հիմք են ծառայել նոր հետազոտությունների համար, այնուհանդերձ դրանցում առկա են բազմաթիվ տարակարծություններ, վիճելի հարցեր և հակասություններ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ լիդերություն, քաղաքական վարք, փոխակերպվող հասարակություն, վարքաձևի փոփոխություն, քաղաքացիական խաղաղություն, միջազգային կայունություն, վարքի սուբյեկտներ, քաղաքական մշակույթ, քաղաքական կարծրատիպեր:

Համաշխարհային հանրության զարգացման արդի փուլում, երբ տեղի են ունենում սրընթաց զարգացող աննախադեպ իրադարձություններ և խոշորամասշտաբ մոդիֆիկացիաներ, գլոբալիզացիայի և անջատողականության իրարամերժ հակասություններ, ահաբեկչական գործողություններ, տարէթնիկ և տարակրոն քաղաքակրթությունների պայքար, քաղաքացիական խաղաղությանը և միջազգային կայունությանը սպառնացող բախումներ ու ճգնաժամեր, առանցքային դեր ու նշանակություն է ձեռք բերում արդյունավետ լիդերության հիմնախնդիրը՝ միտված վերոհիշյալ երևույթների բացասական պոտենցիալի մարմանը: Փոխակերպվող հասարակություններում տեսանելի են շղթայական հերթափոխություններ՝ միտված մի կողմից՝ անկայունությունների ու անորոշության, զանգվածային տրամադրությունների վերելքների ու վայրէջքների, արժեհամակարգերի, համոզմունքների, գնահատականների, հոգեվիճակների ու վարքաձևերի փոփոխություններին, մյուս կողմից՝ այդ ֆոնի վրա ընդգծված ձևով դրսևորվում են նաև լիդերության տարաբնույթ փոխակերպումները: Այս համատեքստում լիդերության տիպերի բազմակողմանի ուսումնասիրությունը, դրական և բացասական փոխակերպումների բացահայտումն ու վերհանումը այսօր առավել, քան երբևէ, հրատապ է: Դա մեծապես պայմանավորված է նրանով, որ արդյունավետ լիդերությունը առանցքային դեր է կատարում քաղաքականության մեջ՝ նորամուծությունների և բարեփոխումների իրականացման, այդ գործընթացին ուղեկցող հնի ու նորի միջև հակասությունների լուծման, հասարակության նպատակամետ ուղղորդման, կենսունակության բարձրացման և դժվարությունների հաղթահարման համատեղ գործում:

Բոլոր ժամանակներում և ամենուրեք կառավարման և լիդերության հիմնահարցերը մեծ մտածողների ուշադրության կենտրոնում են եղել: Մասնավորապես սոցիալ-հոգեբանական գիտական ուսմունքների տեսական կառուցվածքի համար հիմնական սկզբնաղբյուր են ծառայել անտիկ աշխարհի փիլիսոփա-

ների ու Ն.Մաքիավելիի գաղափարները, մյուս կողմից՝ Մ.Վեբերի լեգիտիմ լիդերության տեսությունը: Լիդերության տիպերը և ղեկավարման ոճերը բնորոշող հիմնական եզրույթները փոխառվել են հենց այդ մտածողների աշխատություններից: Առհասարակ, կառավարման բնագավառում լիդերության մասին գիտագործնական և տեսական նշանակություն ունեցող սոցիալ-հոգեբանական ուղղվածությամբ աշխատանքներն ի հայտ եկան 20-դարի սկզբներին տնտեսագիտության, քաղաքագիտության և հոգեբանության գիտակարգերի սահմանագծերում:

Եթե լիդերությունն ուսումնասիրող դպրոցները դասակարգենք սկզբնավորման ժամանակագրական կարգով, ապա կստացվի հետևյալ պատկերը:

1.անձնային գծերի /traits school/լիդերության դպրոց (Ֆ.Գալտոն [16], Վ.Վուդս [24], Ռ.Սթոքդիլ [23], Բ.Բաս [11], Դ.Օլշանսկի [6], Ե.Հանթեր և Բ.Ջորդան [19], Ջ.Բարբեր [10]),

2.վարքագծային /behavioral/ լիդերության դպրոց (Կ.Լևին և Ռ.Լիպիտ [20], Ռ. Մուտոն և Ջ.Բլեյք [3] և ուրիշներ),

3.իրադրային հավանականության լիդերության դպրոց (Կ.Մարքս [1], Վ.Բենիս [13, էջ 4-5], Ֆ.Ֆիդլեր [15], Ռ.Հաուս [17], Վ.Վռում [5], Ջ.Ադաիր [2]),

4.հարաբերությունների լիդերության դպրոց (Ռ.Լայկերտ [21]),

5.նոր /փոխակերպվող/լիդերության դպրոց (Մ.Վեբեր [4], Բ.Բաս և Բ.Ավոլիո [11], Ջ.Հովել [17]):

Ներկայումս լիդերության վերաբերյալ բազմաթիվ սոցիալ-հոգեբանական տեսությունները պայմանականորեն կարելի է խմբավորել հինգ գլխավոր հոգեբանական դպրոցներում՝ անձնային հատկանիշների լիդերության (Թ.Քարլայդ, Է.Ջենիքս, Օ.Թեդ, Ս.Կեմֆ, Ռ.Բադեր և ուրիշներ), իրադրական և հավանական լիդերության (Ֆ. Ֆիդլեր, Մ.Էվանս, Վ.Վռում, Ֆ.Յետոն, Պ.Հերսի, Կ.Բլանշար, Ռ.Օսբորն, Ջ.Հունտեր, Ռ.Ջաուչ և ուրիշներ), վարքագծային լիդերության (Ռ.Լիպպիտ, Կ.Լևին, Ռ.Մուտոն, Ջ.Բլեյք և ուրիշներ), հարաբերությունների լիդերության (Դ.Մակ Գրեգոր, Դ.Լայկերտ, Կ.Արջիրիս և ուրիշներ) և նոր լիդերության (Դ.Բարնս, Բ.Բասս, Ռ.Հաուս, Ջ.Հովել, Ջ.Կոնգեր, Ռ.Կանունգո): Յուրաքանչյուր ուղղության արդյունավետությունն ու ազդեցությունը վիճահարույց է եղել տարբեր ժամանակաշրջաններում:

Լիդերության տեսությունները մի կողմից՝ թերի են իրենց միակողմանիությամբ կամ մեկ կամ մի քանի բաղադրիչների դերը գերագնահատելու միտումով, մյուս կողմից՝ էկլեկտիկ ընդհանրություններով փորձում են հաղթահարել հիմնախնդիրների մասնատվածությունն ու առանձին ուսումնասիրությունների սուբյեկտիվիզմը:

Հոգեբաններն առանձնացնում են մարդկային ակտիվության երեք ձևեր: Մարդկային գործունեության այս հոգեբանական դասակարգումնանհրաժեշտէ նաև քաղաքականության, քաղաքական գործընթացների ռեալ նկարագրման համար: Նրանք իրենց դասակարգումներում հիմնվում են հետևյալ հիմնարար վարքային սկզբների վրա՝ բնազդներ, հմտություններ և ողջամտություն [7, էջ 98]:

<u>Բնազդները</u> վարքի բնածին մոդելներն են, որոնք սահմանված են կենսաբանորեն: Բնազդները ներառում են ինչպես մարդու վարքի տարբեր գործողությունները(շնչառությունից սկսված մինչև քայլելը), այնպես էլ ավելի բարդ բնածին պահանջմունքները (ինքնապահպանում, սերնդի շարունակություն և այլն): Քաղաքականության մեջ նկատելի են մարդկային բնազդների բոլոր դրսևորումները՝ ագրեսիա, ժլատություն, ինքնապահպանություն, համերաշխություն և այլն: Քաղաքականության մեջ բնազդային վարքի հիմքը բացատրվում է նախ և առաջ էներգիայի ուղղորդմամբ այս կամ այն արարք-

ներին, որոնք հաճախ գիտակցված չեն մարդու կողմից:

Այսպես, ինքնապահպանման բնազդը դրդում է քաղաքական գործիչներին պայքարել հանուն իշխանության: Քաղաքագետների համար մինչև հիմա վիճահարույց է Ստալինի, իբրև քաղաքական գործչի կերպարի խստության հանգամանքը: Քաղաքական հոգեբանները [8] գալիս են այն եզրահանգման, որ Ստալինը, փրկելու համար իր վիրավորված ինքնագնահատականը ի տարբերություն իր էտալոնի՝ Լենինի, դրդված էր կիրառել այնպիսի բնազդային վարքի ձևեր, ինչպիսիք են՝ կոպտությունը, ագրեսիան և բռնությունը: Որոշ հեղինակներ կարծում են, որ այդ վարքի ձևերը բնածին են, մյուսներն այն բացատրում են որպես կործանման արձագանք: Այնուամենայնիվ, ագրեսիայից բացի կործանումն առաջացնում է անտարբերության զգացում, հետընթաց, ենթարկում և խուսափում [14]: Քաղաքականության մեջ այս բոլոր վարքագծային դրսևորումները բացատրվում են որպես արձագանք իրադարձություններին և հանգամանքներին, որտեղ գործում են վարքի սուբյեկտները:

Վարքի երկրորդ ձևը՝ **<u>հմտություններն են</u>**: Ի տարբերություն բնածին բնազդների, մարդկային վարքերի մեծամասնությունը կյանքի ընթացքում հմտությունների ձեռքբերման արդյունք են: Հմտություններ պահանջվում են քաղաքական գործչից, սովորական ընտրողից, կուսակցության անդամից: Խոսելով քաղաքական հմտությունների մասին՝ նկատի ունեմ որոշակի կարողություններ, որոնք պահանջվում են յուրաքանչյուր քաղաքական գործընթացի մասնակցի կողմից իր դերը և գործառույթները ճիշտ կատարելու համար, սովորություններ, որոնք առաջանում են քաղաքացիների մոտ որոշակի քաղաքական մշակույթում, կարծրատիպեր, որոնք հանդես են գալիս կրկնվող քաղաքական գործողությունների արդյունքում և դյուրին են դարձնում որոշումների ընդունման գործընթացը:

Բանական կամ ողջամիտ գործողությունները հանդիսանում են վարքի երրորդ ձևը: Քաղաքականության մեջ՝ ինչպես և այլ ոլորտներում, բանական և ողջամիտ գործողությունները կարելի է գնահատել տարբեր ձևերով: Բանականության մեկ հանգամանք կարելի է համարել արդյունավետությունը (նպատակի համեմատությունը արդյունքի հետ), մյուսը՝ քաղաքական գործողությունների գիտակցվածությունը: Այս ձևը տարբերվում է մնացած երկուսից նպատակադրվածությամբ: Որպեսզի քաղաքականությունն ունենանպատակադրված բնույթ, որը կմիավորի նրա տարբեր մասնակիցներին, կիրառում են տարբեր միջոցներ: Առաջին հերթին այս հարցը լուծում է տարբեր ծրագրեր՝ գաղափարախոսական սխեմաները, որոշակի քաղաքական ակցիաների հայեցակարգերը, քարոզարշավները: Առանձին անհատի քաղաքական վարքի համար շատ կարևոր դեր է խաղում գաղափարախոսությունը, որը նպատակների և արժեքների կենտրոնացված և համակարգված արտահայտումն է քաղաքականության մեջ: Իհարկե, պարզ է, որ շատ դեպքերում վարքը չի համընկնում ուսմունքներում գրված նպատակների և արժեքների հետ, վերջիններս ուղղակի հանդես են գալիս որպես ուղեցույց:

Անձի քաղաքական գիտակցությունն առաջանում է իր համար արտաքին նպատակների և քաղաքական համակարգի արժեքների, ընտանիքի և շրջակա միջավայրի ներքնայնացման ընթացքում: Դառնալով վերջինիս մասնիկը՝ այդ գաղափարները, նպատակները և համոզմունքները կարող են որոշել վարքը: Անձի մոտ խոր համոզմունքներ զարգացնելու համար, որոնք որպես «օրենք» կորոշեն նրա վարքը քաղաքականության մեջ, անհրաժեշտ է ներգրավել անձի բոլոր «հարկերը», նրա գիտակցության և գործունեության բոլոր

մակարդակները: Ժամանակակից հոգեբանական գրականության մեջ առանձնացնում են անձի կառուցվածքի երեք առաջատար մակարդակներ. կենսաբանական, հոգեբանական և սոցիալական: Սկսելով կենսաբանական մակարդակից՝ մենք մոտենում ենք հոգեբանականին, իսկ հետո արդեն սոցիալականին՝ նկատի ունենալով, որ ամենաբարձր մակարդակն իր մեջ համակարգում է ստորին մակարդակների հատկանիշները և ղեկավարում նրանց:

Գիտնականներին վաղուց հետաքրքրում է այն հարցը, թե արդյոք անձի կենսաբանությունն ազդեցություն ունի նրա քաղաքական վարքի վրա: Ժամանակակից քաղաքագիտական գրականության մեջ գոյություն ունի կենսաքաղաքականության բաժին: Այն ուսումնասիրում է Homo sapiens-ի բռնության, ագրեսիայի, պաշտպանողական ռեակցիաների և այլ հիմնարար հատկանիշների առաջացումը քաղաքականության մեջ: Ոչ պակաս կարևոր է հասկանալ, թե քաղաքականության մեջ ինչպիսի տեղ են զբաղեցնում այնպիսի կենսաբանական բաղադրիչներ, ինչպիսիք են՝ տարիքը, սեռը, ժառանգականությունը, խառնվածքը և այլն: Այս բաղադրիչները մեզ հետաքրքրում են որպես քաղաքական վարքի որոշիչներ: Առաջին հերթին այս տվյալների հիման վրա է կատարվում այն ընտրությունը, թե ով կզբաղեցնի առաջատար դիրք քաղաքականության մեջ: Այսպիսով, քաղաքական գործչի առաջադրման համար շատ կարևոր է նրա տարիքը:

Հայտնի է, որ անցումային շրջաններում և ճգնաժամային իրավիճակներում, ղեկավար պաշտոնների համար հաճախ առաջադրվում է երիտասարդ սերունդը: Դա կապված է հին քաղաքական վերնախավի փոխարինման հետ և նոր սերնդի ներկայացուցչի առաջադրման հետ, ով որևե առնչություն չի ունեցել նախորդ ղեկավարի հետ՝ տարիքից ելնելով: Այսօր Ռուսաստանի Դաշնությունում կան շատ նախարարներ, որոնց տարիքը չի գերազանցում քառասունը:

Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ քաղաքական գործընթացի կայուն զարգացման ընթացքում քաղաքական համակարգի բարձր մակարդակներում առաջ են գալիս քաղաքական գործիչներ, որոնք երկար ժամանակ են զբաղեցնում պաշտոն: Պատկառելի տարիքը հատուկ դեր է խաղում ավանդական քաղաքական մշակույթներում, որտեղ այն խորհրդանշում է իմաստություն: Օրինակ՝ իրանական կրոնական առաջնորդը՝ Խոմեյնը, Չինաստանի ծեր առաջնորդները՝ Մաո Ցզեդուն, Դեն Սիայո Պինը և այլոք:

Տարիքը զուտ կենսաբանական բնութագիր է, որը չունի բացարձակ քաղաքական նշանակություն: Սակայն տարիքային տվյալները ձեռք են բերում քաղաքական նշանակություն տարբեր ավանդույթների, քաղաքական կարիքների և տվյալ պահի իրադարձությունների ազդեցության ներքո:

Ոչ պակաս կարևորություն ունի *սեռը* քաղաքական գործառույթներն իրականացնելիս: Կանայք միշտ էլ որոշակի նշանակություն են ունեցել քաղաքականության մեջ, բայց հաճախ ոչ պաշտոնական դիրքերում, այլ «ետնաբեմում»:

Խառնվածքը՝ նյարդային համակարգի հատկանիշ է, որն անհատական ինքնատիպություն է հաղորդում ոչ միայն առանձին անձանց քաղաքական վարքին, այլ նաև ամբոխի: Այսպես, փոթորկոտ խառնվածքը կարող է քաղաքականության մեջ սխալ հաշվարկման և անզսպության պատճառ հանդիսանալ: Քաղաքական գործիչների մոտ խառնվածքի շնորհիվ ձևավորվում են արարքները և վերջիններիս օգնությամբ հետևորդների մոտ առաջացնում են հետաքրքրություն դեպի քաղաքական իրադարձությունները: Բուռն և փոթորկոտ խառնվածք ունեցող քաղաքական գործչի օրինակ կարող է հանդիսանալ Նիկիտա Խրյուշովը, ով ՄԱԿ-ում կոշի-

կով հարվածում էր ճառաբեմին՝ լսարանի ուշադրությունը գրավելու համար:

Թույլ ընդգծված խառնվածքը նույնպես կարող է վատ ազդեցություն ունենալ քաղաքականության մեջ, քանի որ կողմնակիցները նման խառնվածք ունեցող գործչին մեղադրում են աննախաձեռնողականության և իրադարձություններին անմիջապես չարձագանքելու մեջ:

Ընդհանուր հոգեբանությունից հայտնի է, որ խառնվածքը հանդիսանում է ժառանգական բնութագիր: Այնուամենայնիվ, դրա վարքագծային արտահայտումները կարող են փոփոխվել սոցիալական միջավայրի ազդեցության տակ՝ընդունելով այն ձևերը, որը տվյալ մշակույթը համարում է ընդունելի:

Կենսաբանական բնութագրերից բացի քաղաքականության մեջ հաշվի են առնվում նաև ֆիզիկական տվյալները, օրինակ՝ կամքը, ուժը, արդյունավետությունը, սթրեսային վիճակները հաղթահարելու ունակությունը և այլն:Չնայած որ այս կենսաբանական ցուցանիշները դրված են ժառանգական հիմքում, այնուամենայնիվ հանդիսանում են մարդու անձնական ջանքերի, կամքի արդյունք՝ հաղթահարելու ֆիզիկական թերությունները: Ամերիկայի նախագահ Ռուզվելտը գամված էր անվասայլակին, Քենեդին կրում էր կոշտ սեղմիրան ողնաշարի խնդիրներ ունենալու պատճառով: Սակայն այդ երկու քաղաքական գործիչներն ամերիկացիների հիշողության մեջ չմնացին իրենց ֆիզիկական թերություններով, այլ ընդհակառակը, երկուսն էլ արժանացան իրենց համաքաղաքացիների երախտագիտությանը, որպես կամային և հեռանկարային քաղաքական գործիչներ:

Այստեղ պետք է նշենք, որ այն ինչ կարողացան անել Քենեդին և Ռուզվելտը, պարտադիր չէ, որ կարողանան անել մնացածները, քանի որ արտաքին տեսքը մեծ դեր ունի հասարակության կողմից քաղաքական գործչի ընկալման և ընդունման հարցում: Հաստ ակնոցների առկայությունը, թոշնած մարմինը կամ էլ բարձր կրունկները, որոնք թաքցնում են կարճահասակ լինելու փաստը, կարող են խաչ քաշել նրա կարիերայի վրա, անկախ նրա որոշակի արժանիքներից, որոնք ընդունվում են իրենցընտրողների կողմից:

Անձի հոգեբանական մակարդակը ներառում է հետևյալ տարրերը՝ զգացմունքները, կամքը, հիշողությունը, մտածողության ունակությունը, բնավորությունը: Դրանցից յուրաքանչյուրը կարող է ազդել քաղաքական վարքի վրա: Քաղաքականության մեջ կարևոր դեր են խաղում զգացմունքները՝վախը և ուրախությունը, զարմանքը և ատելությունը, նախանձը և շահը: Սրանք ոչ միայն ուղեկցում են քաղաքականությանը, այլ շարժիչ ուժ են դառնում, երբ համատարած բնույթ են ստանում:

Կամքը, անձի ամենագիտակցված հոգեբանական տարրն է: Յուրաքանչյուր ոլորտում առանցկամքի անհնարին է հասնել հաջողության: Քաղաքականության մեջ կամքը ոչ միայն առաջադրված նպատակների իրականացումն է, այլ ազգային շահը նեղ անձնական և խմբային շահերից վերդասելու կարողություն:Ոչ պակաս դեր է խաղում հիշողությունը քաղաքականության մեջ Առաջին հերթին լավ հիշողությունը լիդերի կարևորագույն հատկանիշներից մեկն է, ով ստիպված է մեծ քանակի տեղեկատվություն տեղավորել իր ուղեղում: Այստեղ խոսքը գնում է ոչ միայն հիշելու մասին, այլև այդ տեղեկատվության կարևոր բաղադրիչներն ընտրելու և պահելու մասին: Հայտնի է, որ քաղաքական գործչի համար կարևոր նշանակություն ունի մարդկանց դեմքերը և նրանց կողմից արտահայտած հիշելու ունակությունը, որոնք բնազդային մակարդակի վրա թույլ են տալիս ձևավորել աշխատակիցների և հակառակորդների նկատմամբ իրենց վերաբերմունքը:

Քաղաքական վստահությունը, որը քաղաքացիները զգում են քաղաքա-

կան գործչի նկատմամբ, ձևավորվում է տարբեր ձևերով: Եթե տոտալիտար գիտակցության կրողի համար այն մոտ է կրոնական հավատքին և չի պահանջում ոչ մի ռացիոնալ բացատրություն, ապա դեմոկրատականի համար այն ավելի շատ մոտ է գիտական իմացությանը: Եթե առաջին դեպքում բավական է միայն առաջնորդի մեծարումը, ապա երկրորդ դեպքում մեծանում է ուշադրությունը ղեկավարի անձնային գծերի նկատմամբ: Կարևոր է դառնում նաև այն, թե ինչ պաշտոններ է նա զբաղեցրել անցյալում և ինչպես է կատարել իր պարտականությունները, իր կերպարը և նրա տեսակետները տարբեր հարցերի վերաբերյալ:

Մանրակրկիտ վերլուծելով լիդերի անձնային հատկանիշներն ու որակները՝ կարևորվում է այն հարցը, թե լիդերի անձնային հատկանիշներն ինչ ներգործություն են ունենում քաղաքական գործընթացների վրա, այլապես դրանք դառնում են ինքնանպատակ և անիմաստ:

Բոլշևիկները, ելակետ ընդունելով դասակարգային պատկանելությունը և նվիրվածությունը բոլշևիկյան գաղափարախոսությանը, չէին արժևորում քաղաքականության մեջ անձնային հատկանիշները: Սակայն հատկանիշները բոլորովին էլ երկրորդական չեն:

Իբրև ընդգծված լիդեր բոլոր դրսևորումներով՝ դրական և բացասական, ուշագրավ է քննարկել Ստալինի հակասական բնավորությունը, օրինակ, բոլորին հայտնի կոպտությունը, իբրև որոշակի սոցիալական երևույթների արտացոլում: Նրա անձի գլխավոր հատկանիշներից մեկը նրա վրեժխնդրության պահանջմունքն էր, բոլորի նկատմամբ գերազանցության հասնելը: Ստալինն ուներ պաթոլոգիային հասնող նախանձի զգացում, որն էլ պայմանավորում էր նրա ոխակալությունը բոլոր նրանց նկատմամբ, ովքեր գերազանցում էին նրան այն հատկանիշներով, որոնցում, ըստ նրա, նա չուներ իրեն հավասարը: Նա ուներ երկու հատկանիշ՝ ծուլություն և նախանձ, նախանձ նրանց նկատմամբ, ովքեր գիտեին կամ կարողանում էին ավելին, քան նա: Նրա դժբախտությունը կայանում էր նրանում, որ ինքը չէր կարողանում հավատացնել բոլորին, որ նա մեծ է բոլորից: Եվ ինչ-որ հրեշավոր բան կար այն երևույթի մեջ, որ իր այդ դժբախտության համար նա չէր կարող վրեժխնդիր չլինել մարդկանցից, բոլոր մարդկանցից և հատկապես նրանցից, ովքեր ինչ-որ բանով ավելի բարձր էին ու ավելի լավն էին իրենից: Եթե որևէ մեկն ավելի լավ էր խոսում, նա դատապարտված էր, ինքն այլևս նրան կենդանի չէր թողնի, քանի որ այդ մարդը նրա համար հավերժական հիշեցում էր այն բանի մասին, որ ինքն առաջինն էր, բայց ոչ լավագույնը:

Ստալինի անձի հոգեբանությունը առավել ամբողջական ներկայացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև նրա ներաշխարհի, նրա ներանձնային հոգեբանական առանձնահատկությունները:

Ընդհանրապես նրա համար մարդիկ բաժանվում էին երկու խմբի՝համախոհներ և թշնամիներ, ում դեմ նա պետք է պայքարեր, երկրորդ խումբ նա առհասարակ չէր տարբերակում, անծանոթները կարող էին պատկանել և՛ առաջին, և՛ երկրորդ խմբին: Պետք է նշել Ստալինին հատուկ մի էական հատկանիշ ևս, նա չէր տարբերակում անձնական հարաբերությունները քաղաքական հարաբերություններից: Այստեղից էլ այն համոզմունքը, որ իր անձնական թշնամիները և գաղափարական թշնամիները նույնական են: Կարծում ենք, սրա հիմքում ընկած էր Ստալինի խորին համոզմունքը սեփական անսխալականության և անգերազանցելիության նկատմամբ, որը հիմք է տալիս տրամաբանելու, որ նրա դեմ դուրս եկողները դուրս են գալիս գաղափարի դեմ որի մարմնացումը ինքն էր՝«ժողովուրդների հայրը և մեծ առաջ-

նորդը»: Գործընկերների և ականատեսների վկայությամբ Ստալինը ծայրահեղ կասկածամիտ էր, իսկ կյանքի վերջին տարիներին նրա կասկածամտությունը արդեն չէր ենթարկվում բանական որևէ բացատրության: Ստալինի պարանոյան առավել ցայտուն դրսևորվեց նրա անտիսեմիտիզմում: Կյանքի վերջին տարիներին նրան ամբողջովին կլանել էր «սիոնիստական դավադրությունների» գաղափարը, ինչը նրան դրդեց կազմակերպելու «անծնունդ կոսմոպոլիտների դեմ» ոչնչացման միջոցառումներ և նույնիսկ ողջունեց Հիտլերի այն ծրագիրը, որը «վերջնականապես կլուծեր հրեական խնդիրը»՝ այն համարելով «հանձարեղ»: Կարելի է ասել, որ այս պատժիչ գործողությունները թեև պաշտոնապես շղարշված էին «հակաբոլշևիկյան գործողություններով», այնուամենայնիվ, դրանց խորքային պատճառները Ստալինի անձնային հատկանիշների մեջ են:

Ստալինը ծայրահեղ անհանդուրժող էր իր անձի քննադատության և առհասարակ այլախոսության նկատմամբ: Ինչպես նշում է Է.Ֆրոմմը.«Նարգիզականության հիվանդագին էլեմենտներից մեկն էլ նարգիզականության որևէ օբյեկտի քննադատության վերաբերյալ հուզական հակազդումն է... նարգիզական մարդը իր հասցեին ուղղված ցանկացած քննադատությանն արձագանքում է ծայրահեղ չարությամբ: Նա հակված է քննադատությունն ընկալել որպես թշնամական հարձակում, քանի որ, հենվելով իր նարգիզականության վրա, նա չի կարողանում պատկերացնել, որ քննադատությունը կարող է լինել արդարացի: Նրա չարացածության պատճառը պարզ է դառնում, եթե հիշեք, որ նարգիզական մարդը աշխարհի հետ կապից դուրս է, որ նա միայնակ է և վախի մեջ է: Միայնության և վախի այդ զգացումը նա փոխհատուցում է իր նարգիզական մեծարմամբ»:Եվ եթե նարգիզական տիպի ընկալմամբ նա ինքը աշխարհն է, ապա գոյություն չունի արտաքին աշխարհը, որը կարող է նրան վախ ներշնչել, եթե նա ամեն ինչ է, ուրեմն նա արդեն միայնակ չէ: Դրա համար էլ նա սկսում է զգալ, որ իր ամբողջ գոյությունը վտանգված է, եթե դիպչում են նրա նարգիզականությանը: Եթե վախից նրա միակ պաշտպանությունը՝ ինքնամեծարումը, վտանգի տակ է, նորից ծագում է վախը և նրան դրդում պաշտպանական գործողությունների: Կարծում եմ, այս պարագայում արժե դիտարկել ավերիչ գործողությունների նարգիզականության հիմքը: Ավերումը այստեղ նաև տագնապի հաղթահարման ռազմավարություն է:

«Մարդկանց դեմ» շարժվելով՝Ստալինը ցուցաբերում է այս տիպին հատուկ վարքագծի նորմեր: Նրա անձի վերաբերյալ հասարակական կարծիքի իդեալականացումը դառնում է իր գործունեության կարևոր գրավականը: Այս տիպի արժեքային համակարգը զարգացնում է «ուժը ծնում է իրավունք» կարգախոսը:

Այս դեպքում նման արժեքային համակարգի ձևավորմանը նպաստել է նաև Ստալինի սոցիալականացումը, անձնական փորձառությունը, որի ընթացքում նա յուրացրել է գործունեության համապատասխան միջոցներ:

«Կամք առ իշխանությունը» Ստալինին դրդեց ժխտել իր արմատները Ռուսաստանի հետ նույնականացման միջոցով, որի արդյունքում նա ոչ միայն կորցրեց իր արմատները, այլև ձեռք չբերեց նոր արմատներ: Նա մնաց կտրված աշխարհից, մեկուսացած և անօգնական՝ առանց աշխարհի հետ ստեղծագործական փոխգործակցության, որով պիտի ապահովվեր նրա անվտանգությունը և ձևավորեր արմատներ ունենալու զգացումը:

Ինքնահաստատման և ինքնաիրացման համար ընտրելով զանգվածային ահաբեկչության միջոցը՝ նա այդպես էլ չկարողացավ ապացուցել ինքն իրեն, որ նա լավագույնն է:

Այսպիսով, ձգտելով լինել առաջինը

քաղաքական և հասարակական բոլոր ոլորտներում՝ Ստալինը չիրացրեց իր կարողությունը՝ լինել բացառիկ և նշանակալի գոնե մեկ բնագավառում:

Հասարակությունը տարբեր պահանջներ է ներկայացնում տարբեր սեռերի քաղաքական գործիչներին: Կանանց համար այդ պահանջներն ավելի բարձր են: Դրական իմիջ ստեղծելու համար կին լիդերներին անհրաժեշտ է դրսևորել ավելի բարձր ինտելեկտ, բարոյական հատկանիշներ և անհատականության ուժ, իսկ արտաքին տեսքին պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել: Ինչպես տղամարդ, այնպես էլ կին քաղաքական գործիչների իմիջում էական դեր է խաղում արտաքին տեսքը: Եթե տղամարդկանց արտաքին տվյալները գտնվում են կարևոր հատկանիշների առաջին տասնյակում, ապա կանանց մոտ այն առաջին տեղում է: Կին լիդերները չպետք է ամբողջությամբ նմանակեն տղամարդ լիդերներին: Խորհուրդ չի տրվում ձևավորել նույնպիսի իմիջ, ինչպիսին տղամարդկանցն է, անգամ եթե այդ մոդելը տղամարդ լիդերին մեծ հաջողություններ է բերել: Ժամանակակից կին լիդերների իմիջային մոդելներն ունեն իրենց առանձնահատկությունները:

Թեև լիդերության տիպաբանություններն ավանդաբար ունեն արական կողմնորոշում, քանի որ բոլոր ժամանակներում և բոլոր ոլորտներում լիդերների դերում գերիշխել են տղամարդիկ, սակայն գոյություն ունի նաև կանանց լիդերության տիպաբանություն:

Ներկայումս փորձագետներն առանձնացնում են կանանց հինգ իմիջային ռազմավարություններ, որոնց հետևում են ժամանակակից կին քաղաքական գործիչները:

Երկաթե լեդի: Այս տիպը երբեմն անվանում են «տղամարդկային մոդել»: «Երկաթե լեդին» հուզականորեն կայուն է, ենթակաների նկատմամբ հանդես է բերում դաժանություն, խստություն և ընդգծված ինքնիշխանություն, ցուցադրաբար ինքնավստահ է, մերժում է երկխոսությունը և կարծիքների փոխանակումը, որպես արդյունավետ միջոց: Միաժամանակ աչքի է ընկնում մասնագիտական բարձր որակներով: Նա խիստ է ենթակաների նկատմամբ, պահանջկոտ, մոտիվացիայի համակարգում հենվում է պատժի վրա, ենթականերից սպասում է կարգ ու գիջողականություն, նրանց նախ և առաջ գնահատում է մասնագիտական որակներով:

Կարծում ենք, «երկաթե լեդին» հիմնականում ցանկանում է ինքնահաստատվել լիդերի դերում, նա հաճախ ուժեղ ավտորիտար է՝ցանկանալով ձերբազատվել «թույլ սեռ» կարծրատիպից:

Այսպես, կառավարման ոճը բնորոշող թեստի արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանում կին ղեկավարները կիրառում են առավելագույն կառավարման կոշտ, ինքնիշխան ոճը, նրանց 62.5% ավտորիտար է: Ուստի հաճախ նման կին ղեկավարների չափազանցված արականացումը (մասկուլինությունը) և ավտորիտարիզմը լիդերի դերում ինքնահաստատվելու պաշտպանական ռազմավարություն է:Անգերազանցելի է Մարգարետ Թեթչերի՝ «երկաթե լեդի»-ի կերպարը, ով հետևողականորեն խուսափում էր օգտվել գեղեցիկ սեռի ներկայացուցիչ լինելու հանգամանքից: Գործընկերները վկայում էին, որ Մարգարետ Թեթչերը պաշտոնական շրջապատում ցուցադրաբար իրեն ավելի խիստ, ագրեսիվ և իշխողական էր պահում, քան անձնական հաղորդակցման ժամանակ, քանզի նրան խորթ չէին կանացի հատկությունները, այդ թվում նաև լաց լինելու ցանկությունը, իսկ նրա հոգատարությունը և անհանգստությունը աշխատակիցների նկատմամբ խոսում էին նրա բնավորության մայրական էության մասին [2, էջ 278]:

Ավագ քույր կամ էգալիտար: Այս տիպը հենվում է որոշումների ընդունման կոլեկտիվ ձևերի վրա, խրախուսում է

քննարկումները: Լինելով ինքնավստահ՝ նախընտրում է, որ իր կողքին աշխատեն ուժեղ գործընկերներ: «Ավագ քրոջ» համար կարևոր են մեկ միասնական թիմի զգացումը և կառուցողական քննադատությունները: Շահադրդման համակարգում հենվում է պարգևատրումների վրա, խրախուսում է նորարարությունները և աշխատանքի նկատմամբ ստեղծագործական մոտեցումը: Կարծում ենք, որ «ավագ քրոջ» դերով է հիմնականում հանդես գալիս ԱՄՆ-ի պետքարտուղար Ք.Ռայսը, ում իմիջը կառուցվում է «Ես ուզում եմ ձեզ հասկանալ» սկզբունքի վրա: Ռայսի մասին նույնիսկ երգ է գրվել «Եղբայր, Քոնդոլիզան մեզ կուղեկցի նոր հիասքանչ աշխարհ» բառերով, որտեղ եղբայրը կարելի է փոխարինել «քույր»-ով:

Աշխատամոլ: Աշխատամոլ կամ «գորշ մկնիկ»: Այս տիպը մշտապես խրված է աշխատանքի մեջ, խանդավառ է և նրա նշանաբանն է՝ «ամեն ինչ հանուն հաղթանակի»: Նա, կարևորը խառնելով երկրորդականի հետ, վախենում է պարտականությունները պատվիրակել կոլեգաներին և ամեն ինչ իր վրա է վերցնում:Նա կաշվից դուրս է գալիս, որպեսզի ինքնահաստատվի որպես մասնագետ՝պրոֆեսիոնալ: Հաճախ այնպիսի յուրօրինակ հագուստ է ընտրում, որը չի համապատասխանում զբաղեցրած դիրքին:

Մայր: Առաջին հերթին հոգատար է շրջապատի նկատմամբ և միևնույն ժամանակ սպասում է անվերապահ նվիրվածություն մարդկանցից: Մոր պես սրտացավ է և չափից ավելի զգացմունքային նույնիսկ այն իրավիճակներում, երբ դրա անհրաժեշտությունը չկա:

Կանացի: Այս տիպի կին գործչի աշխատանքային գլխավոր «գործիքներից» են կոկետությունն ու հրապուրանքը, կանացի խորամանկությունն ու ինտրիգները: Ամեն ինչ կառուցում է հույզերի և զգացմունքների վրա, «կանացի» ղեկավարները կիրառում են գերազատական կառավարման ոճը, ինչի արդյունքում տիրում է խառնաշփոթ և ամենաթողություն: Նրանք մի կողմից կանացի հմայքն օգտագործում են քաղաքական գործչի դերում ինքնահաստատվելու նպատակով, մյուս կողմից, ընդհակառակը, հասած դիրքի շնորհիվ ցանկանում են ընդգծել անձնական հմայքը և բավարարել ուշադրության կենտրոնում լինելու պահանջմունքը:

Նախկինում կանացի տիպը, մեղմ ասած, չէր խրախուսվում հասարակության կողմից, և որոշ չափով հանդուրժելի էին դառնում այդպես կոչված «միջին սեռի» կին լիդերները: Այդ առումով, լիդերության հավակնություն ունեցող կանայք ճնշում էին իրենց կանացիությունը և քողարկում այն արական ոճի հագուստով և վարվելաձևով: Եթե տղամարդու աշխատասեղանի վրա ընտանիքի նկարների առկայությունը ոչ միայն բնական էր համարվում, այլ նաև նպաստում էր նրա իմիջի բարձացմանը, ապա կնոջ դեպքում, ընդհակառակը, թաքցվում էին երեխաների նկարները, քանի որ նրանց դեպքում այդ երևույթը սոսկ կանացի թուլություն էր համարվում: Ըստ Ն.Ադլերի [9]՝ լուրջ ղեկավար դառնալու համար նախկինում կինը պետք է թաքցներ իր անձնական երկու դերերը՝ կնոջ և մոր, իսկ ներկայումս այդ երևույթն արդեն առասպել է համարվում: Մ. Թեթչերի կառավարման օրոք այն աստիճան չէին լուսաբանվում նրա ընտանեկան կյանքի վերաբերյալ նյութերը, որ շատերը կարծում էին, թե վարչապետն ամուսնացած չէ, այնինչ ուներ հրաշալի ամուսին և երկու որդիների հոգատար մայր էր:

Այսօր նույնիսկ ամենաբարձր պաշտոնի հավակնություն ունեցողների մեջ կարելի է հանդիպել իրենց կանացիությունը ընդգծող կին լիդերներին: Նրանցից են Հիլարի Քլինթոնը՝ ԱՄՆ-ում, Իրինա Խակամադան՝ Ռուսաստանում, Յուլիա Տիմոշենկոն՝ Ուկրաինայում և Սեգոլեն Ռոյալը՝ Ֆրանսիայում: Այսպես, Հ. Քլինթոնի նախընտրական ար-

շավը կառուցվում էր նրա «ընտանիքի կին» լինելու իմիջի վրա: Ի.Խակամադան իր ինքնակենսագրական գրքում խոստովանում է. «Իմ տեխնոլոգիան պարզ է՝ ես 100 տոկոսանոց կին եմ» (www.hakamada.ru). Ս. Ռոյալը, ով հավակնում էր դառնալ Ֆրանսիայի Հանրապետության առաջին կին նախագահը, «իր նպատակին հասնելու համար գերադասում էր ընդգծել իր կանացի «էությունը»՝դրանով իսկ հակազդելով իր մրցակից Ն. Սարկոզիի՝ իր կենսագրության մեջ, որպես «գործիչ» հանդես գալու շեշտադրմանը, և ընտրողներին ուղղված նրա դիմումը հակիրճ էր. «Ես կին եմ, իսկ դուք դեռ ոչ մի անգամ կին նախագահ չեք ընտրել, այնպես որ՝ եղեք առաջադեմ և փորձեք դա անել հիմա» [22]: Համաձայն հարցումների՝ Ս.Ռոյալը համարվում է Ֆրանսիայի ամենասեքսուալ կանանցից մեկը:

Յ.Տիմոշենկոն արդյունավետորեն շրջանառության մեջ դրեց «Սլավոնական գեղեցկուհու» իմիջը: ՋԼՄ-ում մինչև օրս չեն դադարում նրա ոսկեգույն հյուսքի իրական, թե արհեստական լինելու վերաբերյալ քննարկումները:

Հայտնի է, որ կանայք տղամարդկանց համեմատ ավելի զերծ են խոցելի թուլություններից (գինեմոլություն, խաղամոլություն, սառնամոլություն և այլն), ավելի հազվադեպ են ծայրահեղ գործողությունների գնում, ռիսկի կամ արկածախնդրության դիմում և ավելի քիչ են կոռումպացված: Դա է ապացուցում նաև սկանդինավյան երկրների փորձը, որտեղ կառավարման գործընթացներում կանայք ամենաբարձր տոկոսն են կազմում, իսկ կոռուպցիան և մարդու իրավունքների խախտումները ամենացածր մակարդակն ունեն աշխարհում: Ընդհանրապես, կանանց ներգրավումը դրական ներգործություն է ունենում յուրաքանչյուր կազմակերպության ինչպես բնականոն գործունեության, այնպես էլ իմիջի վրա:

Այսպիսով, լիդերության տիպերի բազմակողմանի ուսումնասիրությունը, դրական և բացասական փոխակերպումների բացահայտումն ու վերհանումը այսօր առավել, քան երբևէ, հրատապ է: Դա մեծապես պայմանավորված է նրանով, որ արդյունավետ լիդերությունը առանցքային դեր է կատարում քաղաքականության մեջ՝ նորամուծությունների և բարեփոխումների իրականացման, այդ գործընթացին ուղեկցող հնի ու նորի միջև հակասությունների լուծման, հասարակության նպատակամետ ուղղորդման, կենսունակության բարձրացման և դժվարությունների հաղթահարման համատեղ գործում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կ.Մարքս, Կապիտալ, Երևան, Հայաստանի պետական հրատարակչություն,1954
2. Адаир Дж. Психология власти. М.Эксмо, 2004
3. Блейк Р., Мутон Д. Научные методы управления.-Киев, 1990
4. Вебер М. Избранные произведения.-М., Прогресс, 1990
5. Врум В., Лидерство и принятие решений, 1973
6. Ольшанский Д.В. Политическая психология. – СПб.: Питер 2002
7. РубенштейнС.Л. Основы общей психологии. М., 1946.
8. Такер. Р.Сталин. Путь к власти. История и личность. М., Прогресс, 1990.
9. Adler N.J.Coaching Global Executives: Women Succeeding in a Worlds beyond Here. In:Coaching for Ledearship. ED.by Goldmith M., Lyons L.,Freas A.. San Francisco, 2000.
10. Barber J. D., Presidential Character: Predicting Performance in the White House, Englewood Cliffs, NJ: Prentice Hall,1985.
11. Bass B. & Avolio B. Improving the Organizational Effectivness through Transformational Leadership. SAGE, 1993
12. Bass B. Leadership and Performance Beyond Expectation. N.Y., FreePress, 1985
13. Bennis W.The four competencies of Leadership, Executive Excellence, 1999, 16(7).

14. Dewes R., Hughes J. Political Sociology, Chichester, 1983, ch.13.
15. Fiedler, F.E. A Theory of Leadership Effectiveness, New York: McGraw-Hill. 1967
16. Galton F., Inquiries into Human Faculty . Macmillan 1883, Second Edition, Everyman, 1907
17. House R. & Howell J. Personality and Charismatic Leadership.1992/3
18. House R., The Path-Goal Theory of Leader Effectiveness// Administrative Science Quarterly, 1971/3
19. Hunter E. & Jordan B., An Analysis of Qualities Associated With Leadership Among College Students // Journal of Educational Psychology/1939/30
20. Levin K., Lippitt R.An Experimental Approach to the Study of Autocracy and Democracy: A Preliminary Note. //Sociometry, 1938/1
21. Likert R. The Human Organization; N.Y., 1967
22. MOUSA, 2006
23. Stogdill R.M. Personal Factors Associates with Leadership, A survey of the literature,Journal of Psychology, 1948/25
24. Woods F.The Influence of Monarch. N.Y., Maximilian.1913

ПСИХОЛОГИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА ПОЛИТИЧЕСКОГО ЛИДЕРА

АСМИК ШАПАГАТЯН

Доцент кафедры политических институтов и процессов Ереванского государственного университета, кандидат политических наук

Анализ проблемы показывает, что, несмотря на разнообразие теоретических и практических концепций в области изучения личности, каждая из них имеет базовые принципы, сочетание которых дает возможность глубокого и всестороннего анализа становления и развития личности политического лидера.

В статье подчеркиваются политические и психологических факторы, способствующие формированию личности в период детства и юности, которые приводят к формированию уникальных личностных качеств политического лидера (наргизация, идентификация, комплексы неполноценности и доминирования). Эти качества в дальнейшем определяют как направление развития личности в качестве лидера, так и влияют на осуществление эффективной национальной политики.

PSYCHOLOGICAL FEATURES OF A LEADER-POLITICIEN

HASMIK SHAPAGHATYAN

PhD in Politics, Associate Professor of the Chair of Political Institutions and Processes, Yerevan State University

The analyses of the discussed problem shows that despite a diversity of studies on theoretical and practical concepts in the sphere of personality developments, each of them has some basic principals a combination of which provides an opportunity to make an in-depth and comprehensive analysis of the formation and the development of a personality of a political leader.

The article emphasizes the political and psychological factors contributing to the formation of personality during childhood and adolescence, which lead to the formation of a unique personal qualities of a political leader (nargization, identification, as well as factors of formation and expression of inferiority and domination), which further define the direction of the person as a leader, as well as the implementation of effective and in the true sense of the word the course of their national policy.